ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ,
գ. Ջրարբի ,

N 141
10 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի կողմից 2019թվականի սեպտեմբեր ամսին ընդունած չորս որոշումները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համայնքի ղեկավարի կողմից 2019թվականի սեպտեմբեր ամսին կար գադրություն չի արձակվել:

Առդիր 5 էջ:

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 26-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-N որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով ավագանու 2006թվականի օգոստոսի 18-ի N01 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի 04-086-0008-0002-001 ծածկագիրը կրող անշարժ գույքին տրամադրել՝ Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, Ջրարբի համայնք, Ս. Խաչատրյան փողոց 1-ին փակուղի 1-ին շենքի 2-րդ բնակելի տուն հասցեն:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեր մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

20 19 թ. սեպտեմբեր 05
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 25-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ, ՊԱՐԻՍՊԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ԶՈՒԳԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. N 2387-Ն որոշումներով և 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ .33-րդ կետերով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության 14^3 հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիհամայնքի Ե. Չարենց փողոցի 7շենքի 2-րդ բնակարանի բնակիչ Ռաֆիկ Պապլարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեում գտնվող տանը կից և իր կողմից ինքնակամ կառուցված 30.6ք/մ տնտեսական պահեստը, 0.7ք/մ պարիսպը , 5.3ք/մ ծածկը և 2.7ք/մ զուգարանը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ տնտեսական պահեստը, պարիսպը , ծածկը և զուգարանը կառուցված են համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որոնց նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սեփականության իրավունքով Ռաֆիկ Պապլարյանին պատկանող նրա կողմից Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեում գտնվող տանը կից ինքնակամ կառուցված 30.6 ք/մ տնտեսական պահեստը, 0.7 ք/մ պարիսպը, 5.3 ք/մ ծածկը և 2.7ք/մ զուգարանը և զբաղեցրած 0.0229 հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ հողատարածքի գործառնական նշանակությունը համարել փոփոխված և համապատասխանեցնել հատակագծին՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:

2. Ռաֆիկ Պապլարյանի կողմից Ջրարբի համայնքի Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեում գտնվող տանը կից ինքնակամ կառուցված 30.6ք/մ տնտեսական պահեստը, 0.7ք/մ պարիսպը, 5.3 ք/մ ծածկը և 2.7 զուգարանը ճանաչել օրինական՝ տրամադրելով Ե. Չարենց փողոցի 7/2 հասցեն:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:

4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 19թ. սեպտեմբեր 04
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 24-Ա

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N02-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՆ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարի 2019թվականի հունվարի 25-ի << ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ե. ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑԻ 7/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0229 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ , 30.6 Ք/Մ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ, 0.7Ք/մ ՊԱՐԻՍՊԸ, 5.3 Ք/Մ ԾԱԾԿԸ ԵՎ 2.7Ք/Մ ՋՈՒԳԱՐԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N02-Ն որոշումը ճանաչել ուժը կորցրած :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

20 19 թ. սեպտեմբեր 04
գ.Ջրարբի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱԿԱԶՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով << Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի ապրիլի 6-ի N 346-Ն որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքապետարանի տարածքում առկա ԼԴ-800 մակնիշի էլեկտրական շչակը, դրա լրակազմ հանդիսացող կառավարման վահանակն և էլ հաշվիչը՝ որպես գույքային արժեք, հաշվառել համայնքի հաշվեկշռում:

2.Սահմանել, որ վերը նշված ազդարարման համակարգի սարքավորման պահպանման և սպասարկման համար պատասխանատու է հանդիսանում՝ Ջրարբի համայնքի ղեկավարի տեղակալ Արման Արսենի Բաբայանը:

3. Սույն որոշումը հայտարարել ըստ առընչության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավար **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

20 19 թ. սեպտեմբեր 04
գ.Ջրարբի